

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Քաղաք Երևան
թվական

տասնվեցը նոյեմբերի, երկու հազար տասնյոթ

ՀՀ արդարադատության նախարարությունում նոյեմբերի 16-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստ:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ՝

Դավիթ Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարար

Վիգեն Քոչարյան- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Արփինե Սարգսյան- ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի առաջատար մասնագետ

Անժելա Թասալյան-«Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Ամո Շարոյան-«Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպություն

Լիլիթ Հովհաննիսյան-«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»

Նարե Արամյան-«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն

Սահդա Ավդալյան-«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

Արմեն Եսոյան-«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն

Կարեն Զադոյան-«Իրավաբանների հայկական ասոցացիա» հասարակական կազմակերպություն

Արտակ Կիրակոսյան-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Թամարա Աբրահամյան-«Արագա» բարեգործական հասարակական կազմակերպություն

Արսեն Ղազարյան-«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն

Լիանա Ղալթադյան-«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»

Հերիքնազ Տիգրանյան–«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
Աշոտ Խլոյան–«Հասարակական խորհուրդ» Երիտասարդ մտավորականների հասարակական կազմակերպություն
Գրիգորի Գրիգորյանց- «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն
Նաիրա Առաքելյան–«Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ- տնտեսական հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան–«ԲՀԻ» օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ
Մարիամ Անտոնյան- «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Արթուր Սաքունց–«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք, օրակարգային հարցերի հիմնական նպատակների ներկայացում:
2. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով» 2017 թվականի առաջին կիսամյակի համար նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը:
3. Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» և «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը հաստատելու, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Դավիթ Հարությունյանը, ողջունելով նիստի մասնակիցներին, կարևորել է օրակարգում ընդգրկված հարցերը և առաջարկել խորհրդի անդամներին ունենալ կառուցողական քննարկում:

Խորհրդի մասնակիցները միաձայն հաստատել են օրակարգը:

Օրակարգային առաջին հարցով Արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավասությանն առնչվող 2017 թվականի գործողությունների կատարման ընթացքը:

Վիգեն Քոչարյանը տեղեկացրել է, որ Գործողությունների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Վերջինով նախատեսվում է օտարերկրյա կալանավորված անձանց կամ դատապարտյալներին, որոնց մերձավոր ազգականները չեն կարող տեսակցել նրանց, ինչպես նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալներին, որոնց մերձավոր ազգականները օբյեկտիվ պատճառներով չեն կարող օգտվել կարճատև տեսակցությունից, տրամադրել ամսվա ընթացքում երկու անգամ մինչև քսան րոպե տևողությամբ տեսազանգի հնարավորություն:

Փոխնախարարի խոսքով, ՄԻՊ ռազմավարության գործողությունների համատեքստում նախարարությունը մշակել է նաև «ՀՀ քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարությանը և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ, որով քրեակատարողական ոլորտին առնչվող առանձին միջոցառումներ են նախատեսվել: Վիգեն Քոչարյանը մասնավորեցրել է, որ, ըստ առաջնահերթության,

թիրախային ուղղություններից է համարվելու քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան պայմանների ապահովմանն ուղղված չափանիշների մշակման և ներդրման միջոցառումը:

Նա նաև տեղեկացրել է, որ ավարտվել են ՔԿԱԳ մարմինների հետ ծննդյան ակտերի գրանցման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համակարգի ներդրման աշխատանքները. ՔԿԱԳ մարմինները ծննդյան գրանցումներն իրականացնում են օգտվելով ծննդյան բժշկական վկայականների միասնական գրանցամատյանի տեղեկատվական համակարգից: Միաժամանակ ծննդյան գրանցման վերաբերյալ տեղեկությունները, քաղաքացու ցանկության դեպքում, ՔԿԱԳ մարմինների կողմից փոխանցվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության ծառայության տեղեկատվական համակարգ՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը ձևակերպելու նպատակով:

Օրակարգային երկրորդ հարցով ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի առաջատար մասնագետ Արփինե Սարգսյանը ներկայացրել է լրամշակման փուլում գտնվող «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» և «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը հաստատելու, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը՝ հավելելով, որ դրանք երկու անգամ ևս ներկայացվել են հանրային քննարկման: Նախարարության աշխատակիցը խոսել է ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևերից, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգից, ինչպես նաև ներկայացրել է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը:

Վերջինիս վերաբերյալ հասարակական խորհրդի անդամներից «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Հերիքնազ Տիգրանյանը, «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ նախագահ Կարեն Զադոյանը և «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» ՀԿ նախագահ Արմեն Եսոյանը ներկայացրել են առաջարկներ, որոնցից մի մասը Նախարարությունը տեղում ներառել է նախագծում, մի մասն էլ խոստացել է քննարկման առարկա դարձնել:

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ

Հերիքնազ Տիգրանյանը առաջարկեց ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևում, որտեղ նշվում է, որ Իրավասու անձը կամ մարմինը համարակալում, կնքում և ստորագրում է գրանցամատյանի բոլոր էջերը և Իրավասու անձը կամ մարմինը վարում է նաև գրանցամատյանի էլեկտրոնային տարբերակը, փոխարինել կամ/կամ սկզբունքով, վրելով կամ էլեկտրոնային գրանցամատյան կամ թղթային:

Նախարար Հարությունյանն ընդունեց առաջարկը և նշեց, որ նախագծում կկատարվի փոփոխությունը:

Արթուր Սաքունցն անդրադարձավ Գործողությունների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին: Արթուր Սաքունցը հետաքրքրվեց այն նոր հնարավորություններով, որոնք նախագծով նախատեսվում են օտարերկրյա կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար, որոնց մերձավոր ազգականները չեն կարող տեսակցել նրանց, ինչպես նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար, որոնց մերձավոր ազգականները որոշ պատճառներով չեն կարող օգտվել կարճատև տեսակցությունից:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչն առաջարկեց համապատասխան Կառավարության որոշման նախագիծը հրապարակել կայքում:

Խորհրդի անդամի առաջարկին ընդառաջ գնալով՝ նախարարը վստահեցրեց, որ Արդարադատության նախարարությունը Կառավարության որոշման նախագիծը կհրապարակի e- draft.am կայքում (հաջորդ օրը նախագիծը տեղադրվել է կայքում՝ <https://www.e-draft.am/projects/558>):

Խորհրդի անդամ Արմեն Եսոյանը հարց բարձրացրեց նոտարների կողմից իրավաբանական փաստը ճանաչելու գործողությունից խուսափելու վերաբերյալ: Արմեն Եսոյանը նաև նշեց, որ հաճախ քաղաքացիները Նոտարական գործողությունների ընթացքում բախվում են մի շարք խնդիրների, որոնք հիմնականում կապված են լինում նոտարական ծառայությունների որակի հետ, ի՞նչ անել այդ պարագայում:

Դավիթ Հարությունյանը մտահոգության վերաբերյալ հորդորեց ՀԿ ներկայացուցչին նոտարների հետ կապված յուրաքանչյուր խնդրի մասով գրավոր դիմում ներկայացնել Արդարադատության նախարարություն՝ հավաստիացնելով, որ բարձրացված յուրաքանչյուր խնդիր կամ դժգոհություն անարձագանք չի մնա:

Նաիրա Առաքելյանն էլ արձանագրեց, որ վերջին տարիների ընթացքում նկատելիորեն բարելավվել են նոտարների կողմից մատուցվող ծառայությունների աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Քննարկված թեմաների վերաբերյալ առաջարկ ունենալու դեպքում այն գրավոր ներկայացնել Հասարակական խորհրդի քարտուղարություն՝ council@justice.am էլեկտրոնային հասցեով, նաև ցանկության դեպքում նախանշել հաջորդ նիստերին քննարկվող թեմաները:

Արձանագրությունը բաղկացած է 6 էջից: